



Որպես մտավոր հաշմանդամ ու թյուր ունեցող տնվոր՝ ծառայողական կամ հոգևորական աջակցության կենդանի ունենալ ու Ձեր իրավունքը

Հոգեկան առողջության անկարողություններ ունեցող շահառուների և նրանց ընտանիքների համար

1. Ո՞րն է բնակարանային պայմանների "հիմնավորված հարմարեցումը"

Կալիֆորնիայի ու միջազմային ունեցող ունեցող մարդը իրավունք ունի զերծ մնալ խտրական ու յուրաքանչյուր բնակարանի վաճառքի կամ վարձույթի հարցերում՝ համաձայն նահանգի և դաշնային օրենքների¹: Այս իրավունքը նշանակում է, որ տան տերը², սեփականատերը կամ այլ բնակարան տրամադրողը չի կարող հրաժարվել բնակարանը ձեզ վարձով տրամադրելուց կամ վաճառելուց, կամ ներգրավվել ձեր դեմ ուղղված

¹ Կալիֆորնիայի զբաղվածության և բնակարանների վերաբերյալ ակտում «հաշմանդամ ու թյուր» (disability) բառի փոխարեն օգտագործվում է «handicap» բառը, սակայն իմաստը նույնն է:

² Միակ բացառությունն այն տան տերերի համար է, որոնք ունեն մեկ ընտանիքի համար նախատեսված տուն և տնվորին միայն մեկ սենյակ են վարձով տրամադրում:

որևէ տեսակի խտրականության մեջ այն պատճառով, որ դուք ունեք մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամություն: Բնակարան տրամադրողը նաև պետք է «հիմնավորված հարմարեցումներ» տրամադրի մտավոր հաշմանդամություն ունեցող տնվորներին: Սանշանակում է, որ բնակարան տրամադրողը պետք է խելամիտքայլեր կատարի՝ իր կանոնները, քաղաքականությունը կամ մեթոդները փոփոխելու համար՝ թույլ տալու համար, որ մտավոր հաշմանդամություն ունեցող անձը օգտագործի և վայելի բնակարանը:

Բնակարանների հիմնավորված ձևափոխությունների՝ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին և լրացուցիչ տեղեկությունների համար տեսեք Disability Rights California –ի Տեղեկատվական թերթիկը. Մտավոր հաշմանդամություն ունեցող տնվորներ. Բնակարաններում հիմնավորված ձևափոխությունների իրավունք:

2. Ո՞րն է տարբերությունը հուզական աջակցության և ծառայողական կենդանիների միջև:

Ծառայողական կենդանին այն կենդանին է, որը վարժեցվել է կոնկրետ հանձնարարություններ կատարելու համար, որոնք օգնում են ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձին: Օրինակ, շունը կարող է վարժեցվել ճանաչել մի իրավիճակ, երբ իր խնամողը շուտով կուներ նանոպա, և արձագանքել այնպես, որ տվյալ անձը ապահով լինի, մինչև նոպան անցնի: Հուզական աջակցության (կամ «ուղեկից») կենդանին այն կենդանին է, որը սփոփում է մտավոր հաշմանդամություն ունեցող անձին՝ առանց այդ անձին օգնելու համար կոնկրետ հանձնարարություններ կատարելու համար վարժեցված լինելու:

3. Ես կարող եմ խնդրել իմ տան տիրոջը հրաժարվել ընտանի կենդանիներ պահելը արգելող կանոնից՝ թույլ տալու համար իմ հուզական աջակցության կամ ծառայողական կենդանուն ապրել ինձ հետ:

Այն: ³Տան տիրոջից կամ այլ բնակարան տրամադրողից կարող ե պահանջվել, որպեսզի նա հրաժարվի «ընտանի կենդանիներ պահելը արգելող» կանոնից՝ որպեսզի հիմնավորված հարմարեցում՝ թույլ տալու համար հաշմանդամություն ունեցող տնվորին ապրել ծառայողական կամ հուզական աջակցության կենդանու հետ: ³Այնուամենայնիվ այդ հարմարեցումը հիմնավորված չի համարվի, եթե կենդանին. ուղղակի վտանգ է ներկայացնում այլ տնվորների համար; Էական \$իզիկական վնաս է հասցնում գույքին; տան տիրոջը պարտադրում է ոչ պատշաճ \$ինանսական կամ վարչական բեռ կրել; կամ հիմնովին փոփոխում է տան տիրոջ կողմից տրամադրվող ծառայության ներքին բնույթը: Որպես ծառայողական կամ հուզական աջակցության կենդանու սեփականատեր, դուք պատասխանատու եք այդ կենդանին խնամելու համար: Դուք պետք է նաև ապահովեք, որ կենդանին համապատասխանի կենդանիների հսկողության վերաբերյալ նահանգային և տեղական օրենքների պահանջներին, և վտանգ կամ անհարմարություններ չներկայացնի համայնքի համար:

³ 2011 թվականին Չաշմանդամություն ունեցող ամերիկացիների վերաբերյալ ակտի համաձայն ուժի մեջ մտան կանոնակարգեր, ըստ որոնց մեստորաններում, խանութներում և այլ տեսակի բիզնեսներում թույլատրվում է միայն ծառայողական շների մուտք, և չեն թույլատրվում ուղեկից կենդանիներ կամ այլ տեսակի ծառայողական կենդանիներ՝ որպեսզի հիմնավորված հարմարեցում հաշմանդամություն ունեցող հաճախորդների համար: Այնուամենայնիվ այս հարմարեցումները չեն ազդում բնակարաններում անկարողություններ ունեցող տնվորների՝ շներից բացի այլ ծառայողական կամ ուղեկից կենդանիներ պահելու իրավունքին:

4. Ինչ պե՞ս ես պետք է կատարեմ՝ որպես հիմնավորված հարմարեցում հիմ կենդանին պահելու պահանջը :

Հնարավորության դեպքում դուք պետք է գրավոր կերպով ձևակերպեք ծառայողական կամ հոլդական աջակցության կենդանի պահելու ձեր պահանջը: Պահանջում, դուք պետք է բացատրեք, որ անկարողությունը նույնքան թե ինչու է ձեզ հարկավոր, որ կենդանին ապրի ձեզ հետ՝ որպես ընտանի կենդանիները արգելող կանոնի հիմնավորված հարմարեցում: Դուք պետք է խնդրեք ձեր բնակարան տրամադրողին պատասխանել մինչև որոշակի ամսաթիվը:

Ձեր պահանջին ի պատասխան բնակարան տրամադրողը կարող է խնդրել նամակ ձեր բժշկից կամ այլ բժշկական մասնագետից՝ ի հաստատում նրա, որ դուք հաշմանդամություն ունեք և ներկայացնել, թե ինչու դուք ունեք կարիք, որպեսզի ծառայողական կամ հոլդական աջակցության կենդանին ապրի ձեզ հետ: Այնուամենայնիվ, բնակարան տրամադրողը իրավունք չունի պահանջել ձեր բժշկական փաստաթղթերի պատճենը, կոնկրետ խտրողական մը կամ թույլ տվողություն ուղղակիորեն խոսել ձեզ բժշկական ծառայություններ տրամադրողի հետ:

5. Ինչ պե՞ս կարող եմ ավելի նիմանալ :

Եթե հարցեր ունեք հաշմանդամություն ունեցող մարդկանց բնակարաններին հետ կապված խտրականությունից պաշտպանող նահանգային և դաշնային օրենքների, ձեր իրավունքների կամ պարտավորությունների վերաբերյալ, կապեք Disability Rights California-ի հետ:

Հեռ.՝ 800-776-5746

Տեքստային մոնիտորով հեռախոս 800-649-0154

www.disabilityrightsca.org

Ցանկանում եմք, որ կապվեք մեզ հետ: Այս տեղեկատվական թերթիկը կարդալուց հետո խնդրում եմք պատասխանել այս կարճ հարցաթերթին և մեզ հայտնել ձեր կարծիքը:

Անգլերեն տարբերակ՝ <http://fs12.formsite.com/disabilityrightsca/form54/index.html>

Իսպաներեն տարբերակ՝ <http://fs12.formsite.com/disabilityrightsca/form55/index.html>

Խտրականության վերացման նպատակով պիտակավորման, խտրականության, նվազեցման և կատարելագործման քաղաքականության ծրագիրը ֆինանսավորվում է ընտրողների կողմից հաստատված Յոզելյան առողջության ծառայությունների ակտով (Նախ. 63) և կառավարվում է Կալիֆորնիայի հոգեկան առողջության ծառայությունների մարմնի կողմից (CaIMHSA): County MHSA-ն ֆինանսավորում է CaIMHSA-ի աջակցությունը, որն անհատների, ընտանիքների և համայնքների համար հոգեկան առողջության հետ կապված արդյունքները բարելավելու համար աշխատող շրջանների կառավարությունների կազմակերպությունն է: CaIMHSA-ը տրամադրում է ծառայություններ և իրականացնում է ուսումնական ծրագրեր նահանգի, տարածաշրջանային և տեղական մակարդակներով: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք <http://www.calmhsa.org> կայքը:

